

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

---

«22» հոկտեմբեր 2019 թ.

No 3077 - Լ

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ  
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցման մասին պայմանագիրը և առողջապահության նախարարի 2019 թվականի հոկտոմբերի 22-ի թիվ 3061-Լ հրամանը

**Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ**

1. Հաստատել «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպություններում առողջապահության նախարարության մշտական ներկայացուցիչների և կազմակերպությունների ցանկը»՝ համաձայն հավելվածի:

2. Առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության պետ Ծաղիկ Վարդանյանին.

1) ապահովել բժշկական կազմակերպություններում առողջապահության նախարարության մշտական ներկայացուցիչների աշխատանքները համաձայն առողջապահության նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 22-ի N 3061-Լ հրամանով հաստատված աշխատակարգի,

2) սահմանել բժշկական կազմակերպություններում մշտական ներկայացուցիչների աշխատանքային ժամերը առավոտյան ժամը՝ 9:00-ից մինչև 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից, հոկտեմբերի 23-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամկետով:

3. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

4. Առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զարուհի Դարբինյանին՝

1) ապահովել սույն հրամանի առաքումը բժշկական կազմակերպություններին:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Արտյոմ Սմբատյանին:

Սյուն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ  
 ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ  
 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ  
 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
 ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ  
 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Կազմակերպության անվանում	Ներկայացուցիչ
«Արաբկիր Բժշկական Համալիր ԵԴԱԻ» ՍՊԸ	Էդուարդ Մուսինյան - ՊԱԳ փորձագիտական գնահատման և մշտադիտարկման առաջին բաժնի գլխավոր մշտադիտարկող
«Էրեբունի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ	Մարգարիտա Քոչարյան - ՊԱԳ փորձագիտական գնահատման և մշտադիտարկման առաջին բաժնի գլխավոր մշտադիտարկողի ժ/պ
«Նատալի ֆարմ» ՍՊԸ «Աստղիկ բժշկական կենտրոն»	Հասմիկ Աղինյան - ՊԱԳ փորձագիտական գնահատման և մշտադիտարկման երկրորդ բաժնի գլխավոր փորձագետ
«Մ.Հերացու անվան ՊԲՀ» հիմնադրամ	Էդգար Գրիգորյան - ՊԱԳ փորձագիտական գնահատման և մշտադիտարկման երկրորդ բաժնի գլխավոր փորձագետ
«Շենգավիթ բժշկական կենտրոն» ՓԲԸ	Նունե Խաչատրյան - ՊԱԳ պայմանագրային գործընթացի կազմակերպման բաժնի գլխավոր բժշկի ժ/պ